

ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԱՎԵՏԱԲԵՐ

1993 թ. փետրվարի 6—8 օրերին Շվեյցարիայի Մոնթրեո քաղաքում, նախաձեռնությամբ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի և Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի, տեղի ունեցավ Ամենայն Հայոց Հայրապետ Վազգեն Ա Կաթողիկոսի և Կովկասի մուսուլմանների խորհրդի գլխավոր և Ադրբեջանի հոգևոր պետ Շեյխ ուլ Իսլամ Փաշազադեի միջև: Արդեն մի քանի տարի է ԵՀԽ-ն ու ԵԵԿ-ը մտահոգություն են ցուցաբերում Ղարաբաղյան հարցի և տարածաշրջանում պատերազմական գործողությունների բորբոքման առթիվ և մշտական շփումների մեջ են հակամարտ կողմերի հետ՝ որոնելու հարցի խաղաղ կարգավորման երկուստեք ընդունելի մի ելք: Այս խաղաղասիրական առաքելությամբ էլ կազմակերպվեց երկու կրոնապետերի հանդիպումը Ժնևում՝ հաստատելու համար ամենակարևոր գաղափարը, որ ադրբեջանա-հայկական ընդհարումները չունեն կրոնական բնույթ, թեև հայտնի է, որ ադրբեջանական քարոզչական մեքենան հաճախ է օգտագործում հարցի այդպիսի բնութագրումը՝ ապահովելու համար մուսուլման աշխարհի համակրանքն ու աջակցությունը: Այս իմաստով կազմակերպիչների խաղաղասիրական ջանքերը պսակվեցին հաջողությամբ, որովհետև ստորագրվեց համատեղ մի բանաձև, որտեղ ևս մեկ անգամ (առաջին անգամ 1988 թ. Ռոստովում) ընդգծվեց այն կարևոր հաստատումը, որ Ղարաբաղյան հիմնահարցը չունի կրոնական ենթահող: Փաստը մեզ համար ավելի քան կարևոր է այն առումով, որ աշխարհի բազմամիլիոն մուսուլմաններ Ադրբեջանի մուսուլման կրոնապետի բերանից լսեցին այս հաստատումը, և այն այլևս չի կարող քաղաքական շահարկման առարկա դառնալ: Հանդիպումը կազմակերպված է բարձրագույն մակարդակով, մանավանդ, որ կողմերի բանակցությունների պատասխանատվությունը իրենց բարձր ներկայությամբ իրենց վրա վերցրին ԵՀԽ-ի նորընտիր գլխավոր քարտուղար դոկտ. Կոնրադ Ռայզերն ու ԵԵԿ-ի ընդհանուր քարտուղար Ժան Ֆիշերը: Հանդիպման երկրորդ կարևոր ար-

դյունքը պետք է համարել այն համաձայնությունը, որով որոշվեց ԵՀԽ-ի և Դաուայի Իսլամական Կոնֆերանսի շրջանակներում ստեղծել մարդասիրական օգնության ֆոնդ երկու կողմերի տառապյալներին օգնելու՝ առանց կրոնի և դավանանքի խտրականության: Վերջապես գնահատելի պետք է համարել կողմերի պատրաստակամությունը՝ շարունակելու երկխոսությունը՝ հակամարտ կողմերի խաղաղասիրական ջանքերին աջակցելու համար: Ամենայն Հայոց Հայրապետը ևս մեկ անգամ ամենայն վճռակամությամբ հայտարարեց աշխարհին, որ հայ ժողովուրդը ռազմատենչ նկրտումներ չունի և միշտ պատրաստ է մասնակցելու հիմնահարցի խաղաղ կարգավորման բոլոր գործընթացներին:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԺՈՂՈՎԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԹԻՎ

Նախ ես ուզում եմ գոհություն տալ Աստուծո, որ այսպիսի աքանչելի պատեհություն ստեղծվեց, ուր Ադրբեջանի Շեյխ ուլ Իսլամի և իր պատվիրակության հետ հանդիպենք այստեղ, բարեկամական զգացումներով և մեր կրոնական հավատքով՝ դեպի խաղաղության և արդարության մեր Աստվածը:

Իմ շնորհակալությունն եմ ուզում հայտնել Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի կենտրոնական վարչության, հատկապես նորընտիր քարտուղար պրն. Կոնրադ Ռայզերին և Եվրոպական Եկեղեցիների Համագումարի ընդհանուր քարտուղար պրն. Ժան Ֆիշերին, որոնք գիտեմ, որ մի քանի տարիներից ի վեր մտահոգված էին Անդրկովկասի շրջանում դրժբախտ իրադարձություններով: Ես կուզեի ողջունել նաև մեր հին բարեկամ Շեյխ ուլ Իսլամին, որին ես վաղուց ճանաչում եմ և միշտ զգացել եմ նրա հարգալիր վերաբերմունքը դեպի իմ անձը: Մենք հանդիպեցին 1988 թվականին Ռոստովում, Սումգայիթի ողբերգությունից հետո, երբ ժողովին մասնակցեցին քրիստոնյա և մուսուլման Կովկասի բոլոր կրոնապետերը, նաև Վրաստանի Կաթողիկոսը: Այնտեղ քննարկվեցին հարցերը և ընդհանուր խաղաղության և համերաշխության մեկ փաստաթուղթ ստորագրեցինք: Բացի այդ, Շեյխ ուլ Իսլամը և ես ցանկություն ունեցանք, որ նաև հետագայում հանդիպումներ ունենանք անձնապես՝ մեր նպաստը բերելու համար Անդրկովկասի խաղաղության գործին: Բայց այդ հետագա հանդիպումները տեղի չունեցան. ո՛չ Շեյխ ուլ Իսլամի մեղքով և ո՛չ էլ իմ մեղքով: Որովհետև այդ ժողովից հետո պրն. Խարչևը Մոսկվայից, որ կրոնական խորհրդի նախագահն էր այն ժամանակ, ինքը ասաց ինձ, որ այդպիսի հանդիպում ինքը կնախաձեռնի: Բայց չկատարեց այս խոստումը. ձգձգեց, հետո դեպքերը ավելի վատ ընթացք ստացան և այդպիսով խափանվեց այդ գործը: Երանի՜ թե մեր հանդիպումները շարունակվեին և գուցե այստեղ չէինք հասնի: Այժմ, երեք-չորս տարի հետո, շատ ծանր վիճակի մեջ լինելով, ինչպես դուք էլ վկայեցիք, կացությունը անշուշտ իսկապես ողբերգական է. մեծ դժբախտություն է մեր երկու ժողովուրդների համար. և՛ Հայաստանի համար, և՛ ղարաբաղցիների համար, և՛ Ադրբեջանի համար: Հարյուրավոր ադրբեջանցի և հայ երիտասարդներ իրենց կյանքը զոհում են. անհաշվելի նյութական կորուստներ, քանդումներ Ղարաբաղում, Հայաստանի սահմանամերձ շրջաններում. բլոկադա և այլն, և այլն: Անտանելի վիճակ է: Եվ մենք, իբրև Աստուծո անունով խոսող հոգևորականներ,

ՌՍՍՀԵՌՀՍՏՈ ԴՌԵՖՍՀԵՌԼՀՍՆՈՀ ՆԳՏՌՈՈՀ



ՁԱԽԻՑ ԱՋ. ԵՔԿ-Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԺԱՆ ՖԻՇԵՐ, ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏ, ՇԵՅԽ ՈՒԼ ԻՍԼԱՄ ՓԱՇԱԶԱԴԵ ԵՎ ԵՀԽ-Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԿՈՆՐԱԴ ՌԱՅԶԵՐ

կարծեմ անտարբեր չենք կարող մնալ այս ողբերգական պատկերի առջև: Մենք նախ պարտականություն ունենք միասին աղոթելու առ Աստված ադրբեջանցի և հայ զոհվածների հոգիների համար:

Մենք այստեղ եկանք իբրև հոգևորականներ: Ես չեմ ներկայացնում Հայաստանի կառավարությունը կամ Ղարաբաղի իշխանությունները: Ես ներկայացնում եմ Հայ Առաքելական Եկեղեցին, ներկայացնում եմ հայ հավատացյալ ժողովուրդը, որը իր հայացքը դեպի երկինք ուղղած, գրեթե տևապես աղոթում է Աստծուն, որ խաղաղության շնորհը բաշխվի ամբողջ մեր տարածքի վրա, ադրբեջանցիներին և հայերին բաշխվի հավասարապես արևի ջերմությունը և արևի լույսը և Աստուծո օրհնությունը:

Մենք անշուշտ չենք եկել վիճելու համար, չենք եկել վիճելի հարցեր քննելու համար: Բնական է, հարցեր շատ կան, արդեն հիշվեցին՝ պատմական հարցեր, ռազմական հարցեր, քաղաքական միջազգային իրավունքի հարցեր և այլն: Այդ հարցերը քննարկելու ես, իբրև հոգևորական, ո՛չ հանգամանք ունեմ, ո՛չ էլ կոմպետենցիա:

Փառք եմ տալիս Աստծուն և միանում այս մտքով Շեյխ ուլ Իսլամի հայտարարությանը, որ այս ընդհարումները, արյունահեղությունը, որ տեղի են ունենում, որևէ կրոնական հանգամանք չունեն, և պատմականորեն հայտնի է, որ հայ ժողովուրդը, ո՛ւր էլ գտնված լինի մահմեդական երկրներում, միշտ հաշտ ու համերաշխ է ապրել մուսուլմանների հետ և՛ Կովկասում, և՛ Միջին Ասիայում, և՛ Մերձավոր Արևելքում, ուր, ինչպես գիտեք, կես միլիոն հայեր են ապրում արաբական մուսուլման երկրներում: Որևէ ժամանակ որևէ խնդիր չի եղել քրիստոնյայի և մահմեդականի: Եվ ես գոհություն եմ տալիս Աստուծո, որ այս պարագային էլ այդ ճշմարտությունը մնում է հաստատուն: Առաջարկում եմ ձեզ, որ խորհրդակցաբար, միասնաբար մի փաստաթուղթ կազմենք, մի կոչ՝ ուղղված մեր ժողովուրդներին, հրավիրել, որ կրակը, պատերազմի գործողությունները դադարեն և սկսեն խաղաղ բանակցություններ համերաշխ մթնոլորտի մեջ, պատկան կողմերի ներկայացուցիչների միջև: Մենք ևս, իբրև հոգևորականներ, գուցե այդ ընթացքում մի նպաստ փորձենք բերել, ես՝ իմ կողմում, և դուք՝ ձեր կողմում, արագացնելու համար խաղաղարար ընթացքը:

Ընդհանուր քարտուղարը հայտարարեց, որ այդ պրոցեսը կարող է երկար տևել, բայց, համենայնդեպս, պետք է սկսել:

Պետք է հասնել խաղաղության: Մեր ժողովուրդները սպասում են այդ խաղաղությանը:

Մի անսպասելի խաստաթուղթ գտա ես Էջմիածնի մեր արխիվներից: Այս փաստաթղթի ձեռագիրը 1905 թվականն է կրում: Հայերենից մենք թարգմանեցինք ֆրանսերենի, կարող ենք նաև թարգմանել անգլերենի: 1905-ին Բաքվի մեջ, Ադրբեջանի մեջ, նույնիսկ Երևանի մեջ, ուր խառն ազգաբնակչություն կար, ադրբեջանցիների և հայերի միջև անհասկացողություններ են ծագել՝ հասնելով սուր կացությունների. սպասվում էր, որ ազգամիջյան կռիվներ սկսեն, արյունահեղություն ադրբեջանցիների և հայերի միջև: Այս կացության մեջ Ադրբեջանի Շեյխ ուլ Իսլամը գալիս է Էջմիածին: Այն օրերը Կաթողիկոսն էր Խրիմյան Հայրիկը: Միասին քննարկում են ստեղծված վիճակը և այս փաստաթուղթն են խմբագրում, որ խաղաղության և եղբայրակցության և գործակցության սքանչելի կոչ է: Ես ձեզ ֆրանսերենը կարող եմ տալ հիմա: Այնպիսի խմբագրություն ունի, որ կարծեք կարող ենք մենք հիմա ստորագրել այն: Թող այս ոգին, որ աստվա-

ծասեր ոգի է և մարդասեր ոգի է, մեզ առաջնորդող մնա, և մենք կարողանանք այս մեր հանդիպումներից հետո մի հստակ խաղաղության կոչ ուղղել մեր ժողովուրդներին: Թող սա մի սկզբնավորություն լինի, նույնիսկ եթե մենք չհասնենք վերջնական բանաձևումների: Համենայնդեպս չհուսահատվենք, չբաժանվենք իրարից և շարունակենք հետապնդել այս հարցը, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի միջնորդությամբ, և գուցե նաև ուղղակի: Ես միշտ պատրաստ եմ Բաքու գալու համար: Իսկ Շեյխ ուլ Իսլամը կարող է Էջմիածին գալ: Ահա այս խոհերով ես վերջացնում եմ խոսքս և աղոթում եմ, որ Տերը մնա մեզ օգնական և առաջնորդ ոգի՝ դեպի խաղաղություն և դեպի արդարություն:

ՀԱՄԱՏԵՂ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԻՑ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԵՎ ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ ՇԵՅԽ ՈՒԼ ԻՍԼԱՄ ԱԼԼԱՀՇՅՈՒՔՅՈՒՐ ՓԱՇԱԶԱԴԵԻ ԱՏԵՆԱՊԵՏ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

Մենք՝ երկու ժողովուրդների կրոնապետերս, մտահոգված մեր հոգևոր զավակների ճակատագրով, նրանց հոգիների մեջ դաժանության և ատելության սողոսկումով, որը մղում է նրանց Աստծո կամքին դեմ գործողությունների, հանդիպեցինք 6—8 փետրվարի 1993-ին Մոնթրեոյում (Շվեյցարիա), Աստուծո ողորմածությամբ և շնորհիվ նախաձեռնությանը Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի և նրա հետ գործակցող Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի, ու դիտորդությամբ Իսլամի Համաշխարհային Խորհրդի «ԴԱՈՒՎԱ» մարդասիրական ֆոնդի գլխավոր քարտուղարի:

Քննարկելով խնդիրները, որոնք սպառնում են մեր ժողովուրդներին և մեզ, մենք անհրաժեշտ ենք համարում նախ և առաջ շեշտել, որ, հակառակ մի քանի փորձերի՝ անմեղ արյուն թափող ընդհարումը բնութագրելու որպես քրիստոնյա-մահմեդական դիմակայություն, այն չի կրում կրոնական բնույթ: Հայ քրիստոնյաները և ադրբեջանցի մահմեդականները ապրել են և կապրեն խաղաղությամբ, հարգանքով և բարի դրացիությամբ:

Մենք սրտանց աղոթում ենք Ամենաբարձրյալին վասն հանգստյան զոհերի հոգիների, որոնք ընկան այս ողբերգական իրադարձությունների ընթացքում: Հանուն նրանց հիշատակի, մեր երկու ժողովուրդների ապագայի, կոչ ենք անում մեր հոգևոր զավակներին դադարեցնել արյունահեղությունը և բոլոր խնդիրները լուծել խաղաղությամբ, արդարությամբ, քաղաքական միջոցներով՝ համաձայն համընդհանուր ճանաչում գտած միջազգային նորմերի:

Մենք կոչ ենք անում երկու կողմերին առանց պայմանի ազատ արձակել պատանդներին, որոնց մեջ կան շատ կանայք և երեխաներ, և Ժնևյան համաձայնագրի ոգով մարդասիրական վերաբերմունք ցուցաբերել ռազմագերիներին:

Մենք մեր գոհունակությունն ենք հայտնում ընդհարումի խաղաղ ճանապարհով կարգավորման ուղղությամբ ձեռնարկվող ջանքերի համար՝ ՄԱԿ-ի, ԵԱԽՀ-ի և այլ միջազգային կազմակերպությունների ներկայա-

ցուցիչների, ինչպես նաև բոլոր բարի կամքի տեր մարդկանց կողմից, որոնք անկեղծորեն ձգտում են արագորեն դադարեցնել արյունահեղությունը:

Մենք կոչ ենք անում երկու հանրապետությունների նախագահներին ցույց տալ առավելագույն աջակցությունը այս խաղաղ նախաձեռնություններին:

Արտահայտելով մեր կարեկցանքը զոհերի և նրանց ընտանիքների, ինչպես նաև խաղաղ բնակիչների համար, որոնք հակամարտության վայրերում տառապում են դաժան զրկանքներից և կորուստներից, մենք համաձայնվեցինք հիմնադրել մի Միացյալ Միջազգային Մարդասիրական ֆոնդ՝ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի և Իսլամական Համաշխարհային Խորհրդի հովանու ներքո, առանց ազգության և հավատքի խտրության օգնություն ցույց տալու բոլոր նրանց, ովքեր տառապում են: Մենք կոչ ենք անում բոլոր բարի կամքի տեր մարդկանց և միջազգային կազմակերպություններին ամեն կերպ օգնել այս գործին, որ Աստվածահաճո է: Մենք պիտի նշանակենք մեր ներկայացուցիչներին այս ֆոնդին և պիտի ի գործ դնենք ամեն ջանք՝ դրա գործունեությունը արդյունավետ դարձնելու համար:

Մենք արտահայտում ենք մեր անկեղծ երախտագիտությունը Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի ղեկավարությանը՝ այս հանդիպումը կազմակերպելու և հյուրասիրության համար, որ նրանք ցույց տվին մեզ, ինչպես նաև՝ Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսին և Իսլամական Համաշխարհային Խորհրդին՝ այս հանդիպմանը մասնակցելու համար: Մենք համաձայնվեցինք շարունակելու պահպանել բարեկամական կապերը և հետագայում հանդիպումներ կազմակերպելու՝ զորացնելու համար բարի դրացիության ոգին մեր երկու ժողովուրդների միջև:

Թող Ամենաբարեգութ Աստված լսի մեր աղոթքները և թող Նա տարածի իր խաղաղարար ոգին մեր ժողովուրդների և ամբողջ աշխարհի վրա, որպեսզի բոլոր մարդիկ կարողանան գտնել ճիշտ ճանապարհը դեպի արդարություն և խաղաղություն: Ամեն:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՇԵՅԽ ՈՒԼ ԻՍԼԱՄ
ԱԼԼԱՀՇՅՈՒՔՅՈՒՐ
ՓԱՇԱԶԱԴԵ
ԱՏԵՆԱՊԵՏ ԿՈՎԿԱՍՅԱՆ
ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԻ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՄՈՆԹՐԵՈ, 8 Փետրվար 1993

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի և Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի նախաձեռնությամբ սույն թվականի փետրվար 6—8 օրերին Մոնթրեո քաղաքում (Զվիցերիա) տեղի ունեցավ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և Ադրբեջանի մուսուլման ժողովրդի կրոնապետերի՝ Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Շեյխ ուլ Իսլամ Փաշազադեի և նրանց պատվիրակությանց հանդիպումը:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու պատվիրակության կազմում էին. գլխավորությամբ Վեհափառ Հայրապետի, Մայր Աթոռի դիվանապետ գերշ. Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը, Արցախի թեմի առաջնորդ գերշ. Տ. Պարգև եպիսկոպոս Մարտիրոսյանը, Զվիցերիո հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Վիգեն եպիսկոպոս Այքազյանը և Մայր Աթոռի Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ պրն. Ռաֆայել Պապայանը:

Եռօրյա հանդիպումների ընթացքում Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի ընդհանուր քարտուղար դոկտ. Կոնրադ Ռայզերի և Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի ընդհանուր քարտուղար պրն. Ժան Ֆիշերի ներկայության, մտերմիկ մթնոլորտում քննարկվեցին երկու կողմերին հետաքրքրող մի շարք հարցեր՝ կապված Լեռնային Ղարաբաղում ստեղծված տագնապալի իրավիճակի հետ, խաղաղ և արդար մի լուծում գտնելու առաջադրանքով:

Հանդիպման արդյունքը հանդիսացավ երկու կրոնապետերի կողմից ստորագրված համատեղ հաղորդագրությունը:

Հաղորդագրությունը ստորագրելու արարողությունից հետո, փետրվարի 9-ին, երկու կրոնապետերը հրավիրվեցին մամլո ասուլիսի, որի ընթացքում նրանք պատասխանեցին լրագրողների բազմաթիվ հարցերին:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ